ԹԵՄԱ 6

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 6.4. Արդի միգրացիայի գործընթացները, դրանց հետևանքներն ու կարգավորման հիմնախնդիրը

1. Միգրացիաների հետ են կապված տարածքի բնակեցման, տնտեսական յուրացման, արտադրողական ուժերի զարգացման, ռասաների, ժողովուրդների ու լեզուների կազմավորման և ձևավորման, պետական նոր կազմավորումների ստեղծման գործընթացները: Գաղթերի գլխավոր պատճառը տնտեսականն է, բայց կան նաև սոցիալական, էթնիկական, ժողովրդագրական, մշակութային, կրոնական, ռասայական, քաղաքական և այլ պատճառներ:

Միգրացիան անվանում են նաև բնակչության մեխանիկական շարժ (ի տարբերություն բնական շարժի): Մեզ ամենից առաջ հետաքրքրում են արտաքին միգրացիաները:

Վիճակագրությունը վկայում է, որ 1970 թ. աշխարհում արտաքին միգրացիա կատարել է 85 մլն մարդ, 1990 թ.՝ 153 մլն, 2000 թ.՝ 174 մլն, 2020 թ.՝ 272 մլն մարդ: Միջազգային միգրացիաների գլխավոր ուղղություններն են՝ միգրացիաներ զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ, զարգացած երկրների միջև, զարգացող երկրների միջև, անցումային տնտեսության երկրներում:

2. Երկրորդ գործոնը կյանքի պայմանների՝ հարմարավետության, աշխատանքի վարձատրության վիթխարի տարբերություններն են, որ գոյություն ունեն աղքատ և հարուստ երկրների միջև:

Աշխատանքային գաղթերը գլխավորն են, բայց ոչ միակը, որ տեղի են ունենում զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ: 1960-ական թթ. աճեց ոչ միայն «մկանների հոսքը», այլև «ուղեղների հոսքը»: Մտավոր միգրացիան գիտնականների, ճարտարագետների, բժիշկների և այլ բնագավառների որակյալ մասնագետների արտահոսքն է: Իսկ այդպիսիք ԱՄՆ-ում հայտնվել են ամենատարբեր երկրներից:

3. Վերը նշվեց, որ միգրացիաներից գլխավորը սոցիալ-տնտեսականն է կամ, ինչպես հաճախ ասում են, աշխատանքային գաղթերը: Միգրացիայի բոլոր տեսակներն ու ձևերն էլ ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր (հետևանքներ): Այսպես, աշխատուժի պակասը վերացնելու

շնորհիվ, մեղմվում է զբաղվածության հիմնախնդիրը: Մի շարք երկրներում (ՌԴ, Ուկրաինա և այլն) աշխատանքային ռեսուրսների պակասն ազդում է տնտեսության աճի ու զարգացման վրա: Միգրանտները մի կողմից՝ նպաստում են տեղական մշակույթի հարստացմանը դրսից ներթափանցած նոր տարրերով, մյուս կողմից՝ ինտեգրում տարբեր մշակույթներ: Հարկ է նշել, որ բացասական հետևանքներն էլ բազմաթիվ են (բացատրեք և վերլուծեք):